

ՎՈՂՋՈՒՅՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Քե՛զ, արևոտ մեր սարերից, հովիտներից ու մեր սրտից,
 հորհրդային Հայաստանի աշխատավոր ժողովրդից:
 Դո՛ւ, վոր յեկար մեր կովկասյան բազմազգաբ լեռնաստանից,
 Շղթայակապ ժողովրդի ցամառն անեզրը ովկիանից
 Ու կոփեցիր Լեհիհիզմի ամառը հրբով քո մեծ հոգին,
 Քո հաննարի ամպրայաշող տիտանական թուր-կայծակին.
 Դո՛ւ, վոր հսկա Լեհինի հեռ հսկայաբար միշտ անբաժան՝
 կերտում էիր պողպատակուռ շարքերը մեր կուսակցության.
 Դո՛ւ, վոր տեսնում էիր հստակ պայթարների մոտն ու հեռուն,
 Նկուղներում բնդհատակյա, հոկտեմբերյան հրդեհներում,
 Դո՛ւ, վոր տաբար կարմիր գնդերը դեպի մարտ ու հաղթանակ,
 Ցարիցիի տառաստանում, տայգաներում ձյունապարփակ,
 Դո՛ւ, վորի ճակն, ինչպես կայծակ, ահեղ ընկավ նրբանց գլխին,
 վոր պարտության էլի՛մ մատնում հուղայաբար՝ ժողովրդին.
 Դո՛ւ, մեծ հաղթող և տառջնորդ և շինարարդ պատմության,
 Քե՛զ վաղջուռնում է բանաստեղծն ու քո զինվորն անդավանան:
 Դո՛ւ քանդեցիր քո հաննարի կայծակնացայտ հարվածներով
 Հին աշխարհի բերդերն ամեն, որենկները գայլաբարո,
 Ու զբրեցիր սոցիալիզմի յերկաթագիր որեն՛քը մեծ,
 վոր պատմության պողոտաներն արևի պես լուսավորեց,
 Դու զբրեցիր մարդո՛ւ որենկն, աշխատանքի՛ որենկն արդար.
 վորով կերթան ժողովուրդներն ու մարդկությունը դարեդար.
 Դո՛ւ, լուսատու, անեզր ովկիան, կյանքի ակունքդ վիթխարի.
 Լի՛ յեն քեզնով ժողովուրդներն ու պետները քո դարի.
 Քե՛զ արևոտ մեր սարերից, հովիտներից ու մեր սրտից,
 հորհրդային Հայաստանի վերածնված ժողովրդից: